ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հարցադրումների մեթոդի կիրառման ազդեցությունը աշակերտների ակտիվացման համար

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՎԱՐԴԵՆԻՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Աշոտ Հակոբյան Պատմաբան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի *N3* հինական դպրոց

ՎԱՐԴԵՆԻՍ-2022

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____3

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ_____4

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ_____15

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ_____15

5.ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

----------23

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____25

7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 26

Ներածություն

Հետազոտական աշխատանքում ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը : Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ժամանակակից ՏՀՏ –ների և համագործակցային մեթոդների կիրառման միջոցով սովորողների մոտ ձևավորել

*պատճառահետևանքային կապերը վերլուծելու

*փաստերն ու երևույթները գնահատելու

* մեկնաբանելու , վերլուծելու

*հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ և հմտություններ:

Անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայման է, իսկ այսօրվա սովորողը խնդիր ունի

*փաստերը տարբեր տեսանկյունից դիտարկելու

*հարցեր տալու և ցանկացած հայտարարության համար ապացույցներ որոնելու

*դիրքորոշում ունենալու և սեփական դիրքորոշումը պաշտպանելու:

Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Գրականության ակնարկ

Քննադատական մտածողություն (անգլ.՝ critical thinking) ապացուցումների համակարգ, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները:

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները:

Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է:Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում: Ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին»[3]: Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել: Առավել մանրամասն սահմանումն է՝ կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով:Լրացուցիչ մեկնաբանություն տալու նպատակով Ռիչարդ Պոլը (1995) առաջարկեց քննադատական մտածողությունը բաժանել երկու տիպի՝ թույլ և ուժեղ: Թույլ իմաստով քննադատական մտածողությունը սահմանվում է որպես բարձր որակավորում ունեցող, բայց եսասիրությամբ մոտիվացված կեղծ-մտավորականի մտածողություն, ով զբաղված է իր բարեկեցության խնդիրներով և լրջորեն չի մտածում իր գործողությունների էթիկական հետևանքների մասին: Նման մտածողության կրողը հաճախ ունի բարձր

կրթություն, սակայն օգտագործում է իր գիտելիքները անարդար և եսասիրական նպատակներով: Քննադատական մտածողությունն ուժեղ իմաստով՝ առանց եսակենտրոն մոտիվացիաների և սոցիալական ուղղվածության շեղման, օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով արված դատողություններն են: Այս իմաստով քննադատական մտածողությունը անկեղծորեն միտված է ճշմարտությանը հասնելու ճանապարհին խոչընդոտները հաղթահարելուն:Յոգեբան Դ. Ֆ. Հալփերնը (անգլ.՝ Diane F. Halpern) դիտարկում է քննադատական մտածողությունն իբրև ճանաչողության այնպիսի մեթոդների կիրառություն, որոնք տարբերվում են վերահսկողականությամբ, հիմնավորվածութամբ և նպատակասլացությամբ, մեծացնում են ակնկկալվող վեջնարդյունքի ստացման հավանականությունը: Այս մեթոդները կիրառվում են առաջադրանքների, խնդիրների կատարման, հետևությունների ձևակերպման,հավանականությունների գնահատման և որոշումների ընդունման ընթացքում և պահանջում են այնպիսի հմտություններ, որոնք հիմնավորված և արդյունավետ են տվյալ իրավիճակի և առաջադրանքների տվյալ խմբի համար:Նա լրացուցիչ նշում է, որ քննադատական մտածողությանը բնորոշ են տրամաբանական մտահանգումները, փոխկապակցված տրամաբանական մոդելների ստեղծումը և հիմնավորված որոշումների ընդունումը, որոնք հաստատում, չեղարկում կամ էլ ժամանակավորապես բացառում են որևէ դատողութուն: Բոլոր այս հասկացությունները ենթադրում են մտավոր գործունեություն, որը պետք է ուղղված լինի որևէ կոնկրետ կոգնիտիվ հոգեբանական առաջադրանքների կատարմանը:Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն: Այն կիրառում է տրամաբանությունը, ինչպես նաև հենվում է մետագիտելիքի այնպիսի խորը ինտելեկտուալ ունակությունների վրա, ինչպիսիք են հստակությունը, ճշմարտացիությունը, արդարությունը, բովանդակությունը, լայն մտահորիզոնը:Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում: Ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին»[1]: Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել: Առավել մանրամասն սահմանումն է՝ կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով:Լրացուցիչ մեկնաբանություն տալու նպատակով Ռիչարդ Պոլը

(1995) առաջարկեց քննադատական մտածողությունը բաժանել երկու տիպի՝ թույլ և ուժեղ: Թույլ իմաստով քննադատական մտածողությունը սահմանվում է որպես բարձր որակավորում ունեցող, բայց եսասիրությամբ մոտիվացված կեղծ-մտավորականի մտածողություն, ով զբաղված է իր բարեկեցության խնդիրներով և լրջորեն չի մտածում իր գործողությունների էթիկական հետևանքների մասին: Նման մտածողության կրողը հաճախ ունի բարձր կրթություն, սակայն օգտագործում է իր գիտելիքները անարդար և եսասիրական նպատակներով: Քննադատական մտածողությունն ուժեղ իմաստով՝ առանց եսակենտրոն մոտիվացիաների և սոցիալական ուղղվածության շեղման, օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով արված դատողություններն են: Այս իմաստով քննադատական մտածողությունը անկեղծորեն միտված է ճշմարտությանը հասնելու ճանապարհին խոչընդոտները հաղթահարելուն:Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները:Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը:Դասավանդման մեթոդ, ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ:Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները[1]: Այսօրվա դպրոցի նորարարական միտումներից մեկն այն է, որ այն խրախուսում է ստեղծագործ միտքը: Հայտնի փաստ է, որ մարդկային առաջընթացը գալիս է պատճառաբանվածությունից: Այս պատճառաբանվածությունը և յուրօրինակ միտքը ընդլայնում են ստեղծագործ միտքը:

Համագործակցություն

Համագործակցությունը թույլ է տալիս ուսանողներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին: Համագործակցությունը ուսանողների և ուսուցանվող նյութի միջև անձնական կապ է ստեղծում՝ օգնելով ուսանողներին մտածել ավելի անաչառ: Խմբային

աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են: Ուսուցիչները կարող

են ներգրավել համագործակցությունը դասընթացի մեջ, որպեսզի գնահատեն ուսանողի թիմում աշխատելու ունակությունները, ղեկավարման հմտությունները կամ ներկայացնելու ունակությունները:

Համագործակցակցային քննարկումները կարող են բազմաթիվ ձևեր ներառել, ինչպիսին է օրինակ Ֆիշբոլը : Որոշ նախապատրաստումից և հստակ բաշխված դերերից հետո քննարկումները կարող են դասի մեծ մասը կազմել և ուսուցիչը թեմային անդրադարձ է կատարում դասի վերջում կամ հաջորդ դասին:.org hy.wikipedia

Ինչու՞ է համագործակցությունը կարևոր

Համագործակցելու ունակությունը ինքնին համարվում է ավելի ու ավելի կարևոր կրթական արդյունք, քան միջոց այլ առարկաներ սովորեցնելու համար: Համագործակցությունը համարվում է 21-րդ դարի չորս կարողություններից մեկը ստեղծարարության, քննադատական մտածողության և հաղորդակցության հետ միասին: Հետազոտությունը ցույց է տալիս, որ համագործակցելու համար անհրաժեշտ գիտելիքը և կարողությունը զարգացնելը կարևոր է մի քանի պատճառներով.

- Մարդիկ, ովքեր ավելին գիտեն համագործակցության մասին թիմային աշխատանքում հաճույքով են մասնակցում ավելի ակտիվ գործունեության:
- Սովորեցնելով աշակերտներին աշխատել միասին, նրանց սովորելը համագործակցային ուսուցման մոտեցումներով դառնում է ավելի արդյունավետ:
- Ամրապնդելով աշակերտների համագործակցության կարողությունները կարող են

բարձրանալ նրանց հնարավորությունները աշխատանք գտնելու և աշխատանքում առաջխաղացում ունենալու համար, երբ նրանք ավարտեն դպրոցը:

• Սովորեցնելով աշակերտներին աշխատել ուրիշների հետ սոցիալական հարցեր շուրջ՝ համայնքի ներսում, հնարավորություն է ստեղծվում բարելավել նրանց քաղաքացիական մասնակցության պատրաստակամությունը:

Ինչի՞ է նման համագործակցությունը

Խմբային աշխատանքի և համագործակցույթան տարբեր եղանակներ կան, բայց բոլորը հիմնականում նույն բաղադրիչները.

- միջանձնային հաղորդակցություն
- կոնֆլիկտների լուծում
- խնդիրների լուծում

Ինչպե՞ս կարող եմ սովորեցնել աշակերտներին համագործակցել

Ինչպես ցանկացած հմտություն, համագործակցությունը պետք է ուսուցանել հստակորեն: Մանկավարժները կարող ենթադրել, որ պարզապես աշակերտներին խմբերի բաժանելով կարելի է աջակցել ուսումնառությանը: Ավելի շուտ ուսուցիչները իրենք պետք է ներգրավվեն աշակերտների հետ անմիջական հանձնարարությունների կատարման գործընթաների մեջ, սովորեցնելու համար, թե ի՞նչ լավ արդյունք կարող է տալ համագործակցությունը ցանկալի վարքագծեր եւ օգտակար ռազմավարություններ դրսևորելով՝ խնդիրների և հակամարտությունների լուծման համար: Աշակերտները նույնպես պետք է հնարավորություն ունենան կիրառելու իրենց համագործակցության հմտությունները ուսուցչի աջակցությամբ եւ ստանալու հետադարձ իրենց կատարած աշխատանքի մասին:

Հետազոտական դիտարկումներ համագործակցության մի քանի ասպեկտների մասին, որ կարող են մեծացնել աշակերտի հաջողությունները: Օրինակ.՝

- Փոխադարձ գնահատումը:
- Խմբի ձեւավորումը: Խմբերի (չափը, կազմը, եւ խմբի ձևավորման մեթոդը՝ ուսուցչի ընտրված կամ աշակերտի ընտրած) կարող է ազդել աշակերտների փոխազդեցությունների եւ փորձի վրա. Հիմնականում, ուսուցիչները պետք է

օգտագործեն փոքր, տարասեռ խմբեր: Թեեւ աշակերտները կարող են նախընտրել աշակերտների կողմից ընտրված խմբեր, բայց այդ կազմը ավելի դժվար է լինելու վերահսկել: Այդ պատճառով ուսուցիչները ձևավորում են խմբեր աշակերտների ընտրությամբ ձևավորված կազմով, երբ աշակերտները չեն գնահատվելու: Մյուս կողմից, խմբերի համագործակցությունն է գնահատվելու, ապա ուսուցչի կողմից խմբերի կազմը ընտրելու դեպքում խմբերը համազոր կլինեն:

- Դերի հանձնարարում: Աշակերտներին հատուկ դերեր (օրինակ, կազմակերպիչ, իմի բերող) տալով խմբի ներսում խրախուսում է աշակերտներին այդ դերերում ցույց տալ ցանկալի համագործակցության վարքագիծ: Այսպիսով, ուսուցիչները պետք փորձեն օգտագործել տարբեր տեսակի դերեր խմբային աշխատանքի ժամանակ:

Շելենեսը, Վան Կիրը և Վալկեն (2005 թ.) նկարագրեցին համագործակցելու գիտելիքի հինգ մակարդակները, որոնք ներկայացնում են անհատական ներդրումները թիմի երկխոսության մեջ, բարձր մակարդակի ազդանշաններով, ավելի զարգացած բանակցային հմտություններով: Մակարդակ **1** Կիսվել կամ համեմատել տեղեկատվությունը, հիմնվելով դիտարկումների վրա, հստակեցում և սահմանում:

Մակարդակ **2** Դիսոնանս կամ անհամապատասխանություն, կենտրոնանալով կոնֆլիկտները հայտնաբերելու և հստակեցնելու վրա:

Մակարդակ **3** Համատեղ կառուցում, կոնֆլիկտները լուծելու համար կենտրոնանալով բանակցություններ վարելու և նոր գաղափարներ առաջարկելու վրա:

Մակարդակ **4** Ստուգել նախնական կառուցվածքները, կենտրոնանալով այլ ռեսուրսների և հեռանկարների դեմ նոր գաղափարներ վավերացնելու վրա: Մակարդակ **5** Նոր կառուցված գիտելիքների ձևավորում, ուշադրության կենտրոնում պահելով հաստատված համատեղ կառուցած գիտելիքները:

Համագործակցության մակարդակները ըստ Emily Lai Kristen DiCerbo Peter Foltz-ի:

Չմասնակցող

Չի մասնակցում առաջադրանքի կատարմանը կամ այնքան հաճախ է դուրս մնում առաջադրանքի կատարման գործընթացից, որ չի ունենում որևէ ներդրում խմբի կողմից առաջադրանքի կատարման աշխատանքների մեջ:

Մասնակցող

Մասնակցում է առաջադրանքի կատարմանը, բայց չի համագործակցում ուրիշների հետ կամ չի մասնակցում խմբային աշխատանքին: Քննարկումներին մասնակցողները:
Հայտնում է իր սեփական միտքն ու
տեսակետը: Կենտրոնացած է
թեմայի վրա:
Որոշ աշխատանքեր է կատարում անհատապես:

Համագործակցող

Մասնակցում է խմբաի գործողություններին, բայց չի համակարգում
իր ներդրումները մյուսների ներդրումներին: Լսում է առանց
ընդհատելու:
Ակտիվորեն ճշտում է ուրիշների կարծիքը:
Ընդունում հանձնարարված խնդիրները
Միանում է խմբի կոնսենսուսին:

Կառուցում է ուրիշների գաղափարների հիման վրա:

Համակարգող

Համակարգում է և գործընթացը և արդյունքները խմբի անդամների հետ, բայց չի լուծում հիմնական կոնֆլիկտները:

„Ակտիվ լսող է:

Տալիս և ստանում է կառուցողական
վերլուծություն: Հարմարեցնում է
գաղափարները, գործընթացը խմբի
անդամներին
„Ձգտում է կոնսենսուսի:

„Արդյունավետ լուծում է փոքր կոնֆլիկտները:

Կոնֆլիկտ լուծող

„Համակարգում է և գործընթացը և արդյունքները խմբի անդամների հետ:

„„Արդյունավետ լուծում է թե փոքր և թե մեծ կոնֆլիկտները:

„Արտահայտում է անհամաձայնությունները ազնվորեն, բայց նրբանկատորեն: Աջակցում է խմբի քննարկումներին, նույնիսկ եթե չկա ընդհանուր համաձայնության: Գնում է փոխզիջումների և բանակցում է լուծում գտնելու համար:

http://krtutiun20092019.blogspot.com/2017/05/blog

Դասարանական քննարկումներ

Դասավանդման համագործակցային մեթոդի ամենատարածված ձևը դասարանական քննարկումներն են: Սա նաև դասը վարելու ժողովրդական եղանակ է, որտեղ յուրաքանչյուր ուսանող ունի համագործակցելու և իր տեսակետը ներկայացնելու հավասար հնարավություն: Դասարանում կատարվող քննարկումը կարող է իրականացվել կամ ուսուցչի կամ ուսանողի կողմից: Քննարկմանը կարող է նաև հաջորդել ներկայացումը կամ ցուցադրությունը: Դասարանական քննարկումները կարող են ընդլայնել ուսանողի հասկացողությունը, ավելացնել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել ուսանողի հեռանկարները, ընդծել հակառակ տեսակետները,ամրապնդել գիտելիքները, ուժեղացնել վստահությունը և աջակցել համայնքին ուսուցման մեջ: Կախված դասընթացի թեմայից և ձևաչափից՝ իմաստալից և գրավիչ քննարկումների հնարավորությունները տարբեր են[5]:

Դասարանական քննարկումների արդյունավետությունը ապահովվում են ուսանողների հետ քննարկվող հարցերը, ստացված տեղեկատվությունը այլ ձևով մեկնաբանելը, այնպիսի հարցերի օգտագործումը, որոնք զարգացնում են քննադատական մտածողությունը, օրինակ, «Կարո՞ղ ենք մեկ քայլ առաջ գնալ», «Ի՞նչ լուծումներ կառաջարկեք այս խնդրի համար», «Սա ի՞նչ առնչություն ունի մեր սովորածի հետ», «Որո՞նք են … տարբերությունները», «Սա որևէ առնչություն ունի՞ ձեր անձնական փորձի հետ»,« Ինչ՞ եք կարծում, ինչի՞ պատճառով է…»,«Որո՞նք են … հետևանքները»:

Ուսումնասիրելով դասավանդման ռազմավարությունների ազդեցությունը սովորելու ռազմավարությունների վրա՝ պարզ է դառնում,որ բարձրագույն կրթության առաջին տարում կրթությունը չի կարող չափից դուրս բացվել և ներկայացնել ուսուցողական նյութը՝ հաշվի առնելով ուսանողների անհատականության և ակադեմիական մոտիվացիայի կարևորությունը, որը մասամբ բացատրում է թե ինչու են ուսանողները սովորում այնպես՝ ինչպես, որ գործում են

hy.wikipedia.org

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: ԽԻԿ անվանումը եռափուլ համակարգի (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում) փուլերի անվանումների հապավումն է: Այն կիրառվում է ոչ միայն նյութը մատուցելիս, այլև՝ մինչև նյութը հաղորդելը և հաղորդելուց հետո: ԽԻԿ համակարգն իր բնույթով կիրառելի է ցանկացած լսարանի հետ աշխատելիս: Այն կիրառելի է տարիքային բոլոր խմբերի սովորողների հետ:

Խթանումը ԽԻԿ համակարգի առաջին փուլն է, որի նպատակն է խմբային քննարկման միջոցով պարզել (վեր հանել) սովորողների ունեցած գիտելիքները նոր ներկայացվող նյութի վերաբերյալ: Այն կարելի է իրականացնել, օրինակ՝ մտագրոհի օգնությամբ, որտեղ ուսուցչի դերը պատասխանները ուղղորդելն է և դրանք գրանցելը:

Խթանման փուլը հետապնդում է երեք հիմնական նպատակ՝

1. բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները,
2. ակտիվացնել սովորողներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,
3. սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռվածություն:

Իմաստի ընկալումը եռափուլ համակարգի երկրորդ աստիճանն է: Այս փուլում հաղորդվում են նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը: Այն կարող է իրականացվել բազմազան ձևերով (տեքստը պատմելու, ցուցադրելու, կարդալու միջոցով նյութը մատուցելու և այլն): Այս փուլում ևս կարևորվում է ուսուցչի նվազագույն ազդեցությունը սովորելու գործընթացի վրա, միաժամանակ, հետաքրքրությունը պահպանելու նպատակով խրախուսվում է ուսուցման որոշակի մեթոդների կիրառումը: Օրինակ՝ տեքստը կարդալու ժամանակ փոխներգործուն նշանների համակարգի օգտագործումը՝ V - ես սա գիտեմ, - իմ իմացածին հակասում է, + նոր տեղեկատվություն է, ? - անհասկանալի է, շփոթեցնում է, ! - հետաքրքիր է, կարելի է քննարկել: Փոխգործուն նշանների համակարգով մինչև տասը տարեկան երեխաներին դասավանդելիս խորհուրդ է տրվում օգտագործել միայն առաջին երկու նշանները (V - գիտեմ, + չգիտեմ):

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝

1. սովորողի մոտ հետաքրքրության աստիճանի պահպանումը,
2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,
3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կշռադատումը ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է, որն ուսուցիչները դասավանդման ընթացքում հաճախ անտեսում են: Դասի ընթացքում սովորողը մտապահում է և լավ հիշում է առաջին և վերջին տպավորությունը: Կշռադատման փուլում սովորողը յուրացնում է նոր տեղեկատվությունը՝ հարմարեցնելով իր ունեցած գիտելիքներին: Փաստորեն սովորողի մոտ տեղի է ունենում իմացական կառույցի վերաձևավորում: Այս փուլում ևս ուսուցչի դերը նվազագույն է՝ հիմնականում ուղղորդող, հուշող, կարգավորող բնույթի:
Կշռադատման փուլին նպաստող տարբեր մեթոդների օգտագործումն օգնում է, որ սովորողը՝

- հանրագումարի բերի իր գիտելիքները,
- յուրացնի նոր գիտելիքներ՝ դրանք դարձնելով իր սեփականությունը,
- վերակառուցի իր ունեցած նախկին գիտելիքները նոր ձեռք բերած տեղեկատվության հիման վրա:

Կշռադատման փուլում պետք է իրականացվեն հետևյալ նպատակները. սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, սովորողների հետ ծավալել նոր նյութի վերաբերյալ քննարկում՝ հնարավոր դարձնելով նույն գաղափարը տալ ձևակերպումներով կամ այլ մոտեցումներով, նոր գիտելիքները միաձուլել ունեցածին:
ԽԻԿ համակարգը նպաստում է՝

- հանդուրժողականության ձևավորմանը, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը,
- լսելու կարողության զարգացմանը:

Մեթոդներ և հնարներ, որոնք հարմար են կիրառել դասի տարբեր փուլերում :

1. Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում.

- Մտագրոհ,
- Խմբավորում,
- Պրիզմա,
- Մտածի՛ր-զո՛ւյգ կազմիր-քննարկի՛ր,
- Ձնագնդի:

2. Մեթոդներ և հնարներ, որոնք հարմար են կիրառել դասի իմաստի ընկալման փուլում.

- Տ-աձև աղյուսակ,
- Հասկացությունների (գաղափարների) քարտեզագրում,
- Վենի գծապատկեր,
- Փոխներգործուն նշանների համակարգ,
- Համառոտ դասախոսություն,
- Ճրույց,
- Խճանկար,
- Խորանարդում,
- Շրջագայություն պատկերասրահում:

3. Մեթոդներ և հնարներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում.

- Քառաբաժան,
- Տ-աձև աղյուսակ,
- Խորանարդում,
- 10-րոպեանոց շարադրանք,
- Հնգյակներ,
- Հասկացությունների քարտեզագրում:
  https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=
  30468

Հանրակրթության ոլորտում ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը. բարելավում է ուսումնառության ձեռքբերումների որակը,

- աջակցում է ուսման հասանելիությանը և ուսմանը մասնակից դառնալուն,
- նպաստում է սոցիալական համախմբվածությանը և կոնֆլիկտների կանխմանը,
- հիմնարար դեր է խաղում երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում և այլն,
- սովորողների մոտ սոցիալական հիմնախնդիրների դիտարկման, ճանաչման և ընկալման հմտությունների ձևավորում ու դրանց հաղթահարման հնարավոր ուղիների վերաբերյալ խորհրդածելու ունակության զարգացում,
- ռեալ իրավիճակների քննարկման միջոցով սեփական իրավունքների և ազատության իրացման ունակությունների զարգացում՝ առանց խախտելու մյուս քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, նոր իրավիճակներում կողմնորոշման ունակությունների զարգացմանն ուղղված վարժությունների և առաջադրանքների առկայություն,
- հասարակական կյանքին մասնակցության, տեղական համայնքի գործերում ներգրավվման խրախուսման, համերաշխության և սոցիալական համախմբվածության օրինակների և նախադեպերի օգտագործում, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ուղղվածություն,
- անձի (անհատի) և հասարակության շահերի զուգակցում,
- առկա միջավայրի հիմնախնդիրները տեսնելու կարողություն և դրանց լուծմանը անձնական մասնակցության պատրաստություն,
- սովորողների համար նախատեսված գործնական աշխատանքների ներառում (կիրառելով համապատասխան հրահանգներ և հաշվի առնելով անվտանգության պահանջները),
- ուսուցման և դաստիարակության գործընթացում սոցիալական նախագծերի օգտագործում,
- դասավանդման ընթացքում սովորողների ակտիվութունը խթանող մոտեցումների՝ քննարկումների, բանավեճերի և այլն միջոցների կիրառման հնարավորություն,
- արդյունավետ հաղորդակցման հմտությունների, համագործակցության ունակությունների, բախումնային իրավիճակների կանխման, առանց բռնություն գործադրելու ծագած կոնֆլիկտները հարթելու կարողությունների ձևավորման խթանում,

- քննադատական մտածողության զարգացում,

  առաջադրանքներ նախատեսելիս սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական վերաբերմունքի խրախուսում:

Գնահատում

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը: Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման ու կատարելագործման նպատակով օգտագործվում են միավորային (քանակական) և ուսուցանող (ձևավորող) գնահատման արդյունքները:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել

սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Գնահատումը, արժևորումը և չափումը եզրույթներ (տերմիններ) են, որոնք առնչվում են որոշակի տվյալների պարբերական հավաքման և որոշումներ կայացնելու նպատակով դրանց վերլուծության հետ: Կենցաղային օգտագործման մեջ այդ եզրաբառերը երբեմն նույնացվում են, սակայն առկա են ենթիմաստային տարբերություններ, որոնց իմացությունը կարևոր է հատկապես դասավանդող ուսուցիչների համար: Որոշ դեպքերում

այդ եզրույթները ձեռք են բերել նոր իմաստներ կամ իմաստային նրբերանգներ:

Արժևորումն աշխատանքի, արդյունքի, երևույթի արժեքավորության կամ արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե սովորողներն ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց ուսումնական նպատակներին: Ուսուցիչները սովորողներին արժևորում են նաև օլիմպիադաներին կամ այլ ստուգատեսների ու մրցույթների նրանց պատրաստականության իմաստով, ինչպես նաև տարեվերջին որոշելու՝ արդյո՞ք նրանք բավարար չափով պատրաստ են հաջորդ ուսումնական տարում կրթությունը բարեհաջող շարունակելու համար, թե՞ ամռանը լրացուցիչ աշխատելու անհրաժեշտություն կա: Արժևորման հիմնավորվածությունը ամրապնդվում է որոշակի տվյալների հավաքմամբ, որոնց օգնությամբ կկայացվեն ճիշտ որոշումներ: Տվյալների հավաքման այդպիսի գործընթացն անվանվում է չափում, եթե օգտագործվում են քանակական տվյալներ կամ գնահատում, որը կարող է ներառել թե՛ քանակական, թե՛ որակական տվյալներ: Չափումը մի գործընթաց է, որի միջոցով քանակապես որոշվում է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի տվյալ հատկանիշը, որակը կամ հատկությունն ունենալու աստիճանը: Չափման նպատակը համակարգված քանակական տվյալներ ստանալն է, օրինակ՝ թեստերից (թեստային աշխատանքներից), հարցման տարբեր տեսակներից, հանձնարարված նախագծերից: Ստացված թվային տվյալներն օգտագործվում են արժևորումների ընթացքում:

Գնահատում տերմինը մինչ այժմ մենք հիմնականում օգտագործել ենք չափման իմաստով, չենք տարբերակել «գնահատում» ու «գնահատական տալ» արտահայտությունների իմաստները, բայց ներկայումս այն ձեռք է բերել այլ իմաստներ: Ուսումնական գործընթացում գնահատումը նշանակում է նաև քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքում: Ուստի դա ավելի լայն ընդգրկում ունի, քան չափումը: Ուսուցիչների համար գնահատման նպատակը, սովորաբար, սովորողների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է:Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է սովորողների առջև ծառացած դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում:Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո, ելնելով սովորողների արդեն ձեռք բերած գիտելիքներից, նա ընտրում է <u>ուսուցումը շարունակելու ճիշտ տեղը:</u>

Գործնական համատեքստ

Հետազոտությունն իրականացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի N 3 հիմնական դպրոցում, փորձարարական դասերը վարել եմ 6-րդ դասարանի աշակերտների հետ, որտեղ սովորում են թվով 35 աշակերտներ, ընդհանուր առմամբ այս դասարանում առկա է մոտիվացիայի պակաս, կարծում եմ փորձարարական դասերը կօգնեն աակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել ուսումնական գործընթացի նկատմամբ:

Հետազոտության ընթացք

Փորձարարական դասի պլան 1.

Դասարանը՝ 6-րդ
դասարան

Ամիս-ամսաթիվ՝
Առարկան՝ Հայոց
պատմություն Դասի
տևողությունը՝ 45 րոպե
Դասի թեման՝ Արտաշեսյան թագավորության կազմավորումը

Դասի նպատակը՝- Նպաստել Հայոց թագավորությունների անկախացման, Արտաշես արքայի գահակալության շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը:

-Նպաստել սովորողների՝ պատմական իրադարձությունները, երևույթները և դեպքերը ճիշտ գնահատելու, սեփական տեսակետները հիմնավորելու կարողությունների զարգացմանը:

-Ամրապնդել սովորողների հետաքրքրությունը սեփական ժողովրդի պատմության նկատմամբ:

-Նպաստել սովորողների հայրենասիրական և ազգային զգացմումքների ամրապնդմանը:
Վերջնարդյունքը
Կարողանա՝

-Ներկայացնել Աչտաշես Ա-ի գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները

-արժևորել իրավիճակը ճկուն կերպով օգտագորխելու՝ Արտաշես ստրստեգոսի կարողությունը, որի շնորհիվ Հայաստանը վերականգնեց իր անկախությունը

-թվարկել բարենորոգոիմները, կատարած շինարարական
աշխատանքները Կատարել հաշվառում /5րոպե/
Անհրաժեշտ պարագաներ՝ ՏՏ, քարտեզ, դասագիրք
Մեթոդներ՝ Մտագրոհ, Քառաբաժան,
Գծապատկերի կազմում Դասի ընթացքը՝

բերելու ձգտում, մոտիվացիա		-Որտեղի կառավարիճներ նշանակվեցին Արտաշեսը և Զարեհը:
Իմաստի ընկալում-**/25**րոպե/ Նպատակն է՝ 1. Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը 2. տեղեկատվական ընկալման ինքնավերահսկման ապահովումը	Դասարանը բաժանվում է չորս խմբի, աշակերտները կատարում են <<Քառաբաժան>> վարժությունը https://www.vnews.am/culture/artashes-arqan-avandazruycneru m/	Ինչ տեղեկություն ստացա Դասի կարևոր մասը Ինչ զգացի Արտաշես 1-ինի բնութագիրը
Կշռադատում-/7րոպե/ Նպատակն է՝ 1.հանրագումարի բերել սովորողի գիտելիքները 2.հանրագումարի բերել սովորողի գիտելիքները	Աշակերտներին հանձնարարվում է գծապատկերի տեսքով ներկայացնել հայկական չորս թագավորությունները՝ իրենց մայրաքաղաքներով:	Հայկական 4 թագավորությունները
Խթանում- **/5**րոպե/	Աշակերտներին հանձնարարվում է կատարել	Աշակերտները պատասխանում են՝

Այս փուլի նպատակն է 1. բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները 2. Սովորողների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք	<<Մտագրոհ >>վարժությունը -գրատախտակին գունավոր կավիճներով ներկայացնել Հայաստանի վիճակը Քրիստոսից առաջ 4-րդ դարի վերջին	-Ով էր Հայաստանի վտանգավոր հարևանը Քրիստոսից առաջ 3-րդ դարում: -Ովքեր են իշխել Կոմմագենեում Քրիստոսից առաջ 3-րդ դարում:

Գնահատում /3րոպե/ –գնահատումը նախընտրելի է կատարել /Գործընկերների գնահատում /մեթոդով, սովորողները կգնահատեն միմյանց կատարած աշխատանքները: Այս մեթոդը թույլ է տալիս և ուսուցչին, և սովորողներին ճշտել, ուղղել իրենց վաևքագիծը և կոմպետենցիաները:

Հանձնարարել տնային աշխատանք:

Փորձարարական դասի պլան 2.

Դասարան 6-րդ

Ամիս-ամսաթիվ _____

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Հայկական լեռնաշխարհը հայերի հայրենիք Կազմակերպչական մաս, հաշվառում /5րոպե/

Դասի տիպը՝Խառը, համակցված

Դասի նպատակները՝

-Նպաստել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի, բարձր գագաթների, գետերի, լճերի, վարչական բաժանման վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, համեմատելու, արժևորելու կարողությունների ձևավորմանը:

Վերջնարդյունքներ՝
Կարողանա՝
-ներկայացնել և բացատրել Հայրենիք հասկացությունը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, օտարների կողմից հայերին և Հայաստանին տրված անունները

-քարտեզի վրա ցոիյց տալ Հայկական լեռնաշխարհի լեռները, գետեր, լճերը
Դիդակտիկ նյութեր՝ համակարգիչ, պրոյեկտոր, դասագիրք, քարտեզ, պաստառ, մարկեր Մեթոդներ՝ Խմբավորում, Հասկացությունների քարտեզագրում,

Դասը կազմակերպվել է ԽԻԿ համակարգով

Խթանման փուլ/7/ոպե/-Կիրառվել է <<Խմբավորում >> մեթոդը, աշակերտներին հանձնարարվում է խմբավորել ներկայացված տերմինները՝ Հայկական պար, Արագած, Արարատ, Զանգեզուրի, Սևանա լիճ, Վանա, Ուրմիա, Եփրատ, Նեմրութ, Արաքս, Տավրոսի, Թոնդուրեկ, Ճորոխ, Պոնտական, Տիգրիս և այլն:

Վանա լիճ

Ուրմիո լիճ

Գետեր	Լճեր	Լեռներ	Լեռնաշղթաներ

Իմաստի ընկալման փուլ /25րոպե/-Դասարանը բաժանվում է 5 հոգանոց խմբերի: Խմբերին հանձնարարվում է փորձել նկարել Հայկական լեռնաշխարհը:

1- ին խմբին հանձնարարվում է նշել բարձր լեռներն ու լեռնաշղթաները

2- րդ խմբին հանձնարարվում է նշել խոշոր լճերն ու գետերը 3-րդ խմբին հանձնարարվում է նշել Մեծ և Փոքր Հայքերը 4-րդ խմբին՝ 15 նահանգները

3- https://www.youtube.com/watch?v=WmCAh3-LX7w

4-

ՍԵՎ ԾՈՎ
ԿՈՂՔԻՍ
ՎԻՐՔ
ԱՂՎԱՆՔ
ԿԱՍՊԻՑ
ԳՈՒԳԱՐՔ
ՊՈՆՏՈՍ
ՏԱՅՔ
ՈՒՏԻՔ
ԱՐՑԱԽ
ՀԱՅՔ
ԱՅՐԱՐԱՏ
ԲԱՐՁՐ ՀԱՅՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՓԱՅՏԱԿԱՐԱՆ
ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
ԻՍԱՀ
ԾՈՓՔ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ԱՂՋՆԻՔ
ՄՈԿՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՄԻՋԱԳԵՏՔ
ՀԱՅՈՑ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ
ԿՈՐՃԱՅՔ
ՕՍՐՈՅԵՆԵ
ԱԴԻԱԲԵՆԵ
Մեծ Հայք
Արդի Հայք

https://www.youtube.com/

Կշռադատման փուլ /15 րոպե/կիրառվել է <<Հասկացությունների քարտեզագրում>> մեթոդը, յուրաքանչյուր խումբ իրեն հանձնարարված առաջադրանքը կատարեց գրատախտակին ամրացված պաստառին:

Գնահատում՝Կատարել ձևավորող գնահատում: Հանձնարարել տնային առաջադրանք:

Փորձարարական դասի պլան **3.**

Դասարան 6-րդ

Ամիս-ամսաթիվ _____

Դասի տևողությունը՝ 45 րոպե Դասի թեման՝ Եգիպտոս Կազմակերպչական մաս, հաշվառում /5րոպե/

Դասի տիպը՝Խառը, համակցված

Դասի նպատակը՝ Իմանա Եգիպտոսի գոյության ժամանակաշրջանը, նշանավոր քաղաքների անունները, մշակութային ձեռքբերումները, նշանավոր կառույցները, տեղը քարտեզի վրա, աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, պետության կազմավորման նախադրյալների, հզորացման, թուլացման մասին:

Վերջնարդյունքներ՝**-** Բնութագրել բնակիչների զբաղմունքը, մշակութային ձեռքբերումները, եգիպտական բուրգերը,

- ներկայացնի առանձին փարավոնների անունները, ներքին և արտաքին քաղաքականությունը

-բացատրել պետություն, դիցարան, բուրգ, արհեստական ոռոգում հասկացությունները Դիդակտիկ նյութեր՝ SS, քարտեզ, պաստառ,

մարկեր, նկարներ

Մեթոդներ՝ Պրիզմա, **T-**աձև աղյուսակ,

Դասը կազմակերպվում է ԽԻԿ համակարգով

Խթանման **/5**րոպե/ փուլում կիրառվում է <<Պրիզմա>> մեթոդը; Տրվեց մեկնաբառ՝ դասի առանցքային միտքը, սովորողները հարցադրումների հիման վրա գրանցեցին երկու միտք և այսպես շարունակելով՝ սովորողների կողմից կառուցված պրիզման եզրափակվեց վերջնաբառով:

https://i.ytimg.com/vi/jYvyZHHT7Hw/

Իմաստի ընկալման փուլում**/25**րոպե/ կիրառվեց T աձև աղյուսակը, որը սովորողները լրացրեցին.

Հարցեր	Պատասխաններ

1. Որտեղ է Եգիպտոսը 2. Ինրու է հույն պատմիչ Հերոդոտոսը Եգիպտոսն անվանել<<Նեղոսի պարգև>> 3. Եգիպտոսում երբ և ում կողմից է ստեղծվել միացյալ թագավորություն 4. Որն է միացյալ թագավորության մայրաքաղաքը, ինչ գիտեք նրա մասին 5. Ինչ էին անվանում արքաներին Եգիպտոսում և ինչ էր դա նշանակում 6. Ներկայացնել Եգիպտոսի հզորության շրջանը, որ արքաների անվան հետ է այն կապված	1.

https://www.youtube.com/watch?v=06FdfNgWpXc

Կատարել գնահատում ինքնագնահատում և փոխադարձ գնահատում մեթոդով: Հանձնարարել տնային առաջադրանք: /5րոպե/

Տվյալների մշակում և վերլուծություն

Փորձարարական դաս **1**

Վերլուծություն

Այսօր աշակերտը 6-րդ դասարանից սկսում են ուսումնասիրել հայերի և Հայաստանի պատմությունը: Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են: Նրանք բազում դարերի ընթացքում ունեցել են ուժեղ պետություններ, ստեղծել հարուստ մշակութային ժառանգություն: Դրա շնորհիվ հայ ժողովուրդն իր պատվավոր տեղն է զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթությրան մեջ: Եվ հենց պատմության ուսուցչի խնդիրն է՝ դասավանդելիս կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, մեթոդներ, հնարներ, զարգացնել սովորողների քննադատական, ստեղծագործական , իմացական ունակությունները և ապահովել դպրոցականների կայուն ու խորը գիտելիքները:

Փորձարարական դասն իրականացրել եմ 6-րդ դասարանում << Արտաշեսյան թագավորության կազմավորումը>> թեմայով, դասավանդելիս հատուկ ուշադրություն դարձրեցի բաց հարցադրումներին, որոնք նպաստեցին աշակերտների ներգրավվածությանը և մասնակցությանը դասին:

Կարծում եմ դասը կարելի է համարել հաջողված, որովհետև սովորողների հետաքրքրությունը դասի նկատմամբ, ակտիվ մասնակցությունն ու ոգևորվածությունը, դրա վառ ապացույցն էին: Դասի նպատակն ու վերջնարդյունքները կարելի է համարել կատարված:

Փորձնական դաս2

Վերլուծություն 2

6-րդ դասարանում սովորողները ծանոթանում են հայ ժողովրդի հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի, նրա տարածքում գոյություն ունեցած պետական կազմավորումների պատմությանը, հնարավորություն են ունենում ընթերցելու Հայաստանի վերաբերյալ հայ և օտար հեղինակների արժեքավոր պատմություններ:

Դասը իրականացվել է 6-րդ դասարանում, որի ընթացքում իմ ուշադրության կենտրոնում եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառները ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է անել քննադատական մտածողության շնորհիվ:

Փորձնական դաս3

Վերլուծություն 3

Աշակերտի համակողմանի զարգացման հարցում պակաս կիարևոր չէ համաշխարհային պատմության ուսումնասիրումը:

Փորձարարական դասերից մեկն էլ անցկացրել եմ համաշխարհային պատմությունից 6-րդ դասարանում: Աշակերները

գիտեին նեղոսի մասին, աշխարհի յոթ հրաշալիք՝ Եգիպտական բուրգերի մասին: ՏՀՏ -ի միջոցով ցուցադրված պատկերները, նկարներն ու նյութերը դասն ավելի հետաքրքիր դարձրեցին , նոր մեթոդների կիրառումը և վերապատրաստման ընթացքում ձեռք բերված հմտությունները նպաստեցին դասի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Կարծում եմ ուսուցեղական դաս էր

Եզրակացություն

Այսպիսով, պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածիպատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել քննադատական մտածողության հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտներին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատախան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանկատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից:

Գրականության ցանկ

1. Պատմության դասավանդման մեթոդիկա, Հրանուշ Ղևոնդյան, Երևան<<մանկավարժ 2001>>
2. https://elearning.iedf.am/mod/data/view.php?d=1135&advanced=0&paging&page=3
3. Կրթության ազգային ինստիտուտ <<ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, 2008
4. http://krtutiun20092019.blogspot.com/2017/05/blog
5. hy.wikipedia.org